

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 22/4

26 ապրիլի 2014 թ.

Քննարկվեց «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ 07.04.2014 թ-ի գանգատը:

«Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ գանգատում բերված փաստարկները.

«Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպությունը (հետագայում՝ կազմակերպություն) 2013 թ-ի ընթացքում իրականացրել է գործարքներ, ինչի արդյունքում առաջացել են ԱԱՀ վճարելու պարտավորություններ: Տեղեկացված չլինելով այն մասին, որ պետք է կատարվեին ԱԱՀ վճարումներ, կազմակերպությունը 2013 թ-ի 1-ին եռամսյակի համար սխալմամբ կատարել էր շրջանառության հարկի վճարումներ և ներկայացրել շրջանառության հարկի հաշվարկ 1-ին եռամսյակի համար: Սակայն հարկային մարմինների կողմից ստացած տեղեկատվության հիման վրա (ՀՀ ՊԵԿ «Թեժ գիծ») պարզվեց, որ շրջանառության հարկի փոխարեն անհրաժեշտ է կատարել ԱԱՀ վճարումներ և ներկայացնել ԱԱՀ հաշվարկներ:

Ուսումնասիրելով «ԱԱՀ մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթները չկարողացանք միանշանակորեն ընկալել կազմակերպության կողմից ԱԱՀ հաշվարկների ներկայացման ժամկետների նկատմամբ պահանջները: ԱԱՀ հաշվարկը ներկայացնելուց առաջ 2013 թ-ի մայիս ամսվա ընթացքում հեռախոսակապի միջոցով դիմել ենք նաև ՀՀ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ և ՀՀ ՊԵԿ «Թեժ գիծ» հետևյալ հարցումով. «Ի՞նչ ժամկետներում պետք է ներկայացվեն ԱԱՀ հաշվարկներ, եթե համարվում ենք ԱԱՀ վճարելու պարտավորություն կրող կազմակերպություն»: Ստացված պատասխաններից հասկացել ենք, որ ԱԱՀ հաշվարկները պետք է ներկայացվեն ըստ եռամսյակների, քանի որ կազմակերպության 2012 թ-ի եկամուտները չեն գերազանցել 100 մլն դրամը:

Սպառիչ տեղեկատվություն ստանալու համար այցելել ենք ՀՀ հարկային ծառայության պաշտոնական կայք, սակայն «Ավելացված արժեքի հարկ» բաժնում տեղադրված իրավական ակտերում այդպես էլ չենք կարողացել գտնել հետաքրքրող հարցի պատասխանը:

Համոզված լինելով, որ պետք է ներկայացվեն եռամսյակային հաշվարկներ 16.05.2013 թ-ին էլեկտրոնային եղանակով ներկայացվել է ԱԱՀ հաշվարկ 2013 թ-ի 1-ին եռամսյակի համար, ինչպես նաև դիմում՝ սխալմամբ հաշվարկված և վճարված շրջանառության հարկի գերավճարը (1 355 000 դրամ) ԱԱՀ-ի հաշվին հաշվանցելու համար: 16.05.2013 թ-ին կատարվել է նաև ԱԱՀ-ի մասով առաջացած պարտավորությունների գումարի տարբերության (505 592,0 դրամ) վճարումները:

Եռամսյակային հաշվարկն ընդունվել է հարկային մարմնի կողմից և համարվել ներկայացված:

Հաշվարկը (եռամսյակային) ուշացումով (16.05.2013 թ-ին) ներկայացնելու համար Հրազդանի ՏՀՏ կողմից՝ համաձայն ՀՀ հարկերի մասին օրենքի 24-րդ հոդվածի դրույթների, կիրառվել է տուգանք՝ հաշվարկված գումարի 5 %-ի չափով (93 029,61 դրամ), ինչպես նաև նույն օրենքի 23-րդ հոդվածի դրույթների համաձայն հաշվարկվել է տույժ՝ 505 592,0 դրամի չափով գումարը սահմանված ժամկետից ուշ վճարելու համար:

24.07.2013 թ-ի դրությամբ Հրազդանի ՏՀՏ կողմից կիրառված տուգանքի և հաշվարկված տույժի գումարի հանրագումարից գոյացած ապառքը կազմել է 110 809,0 դրամ, ինչի պատճառով կազմվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ կայացվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 14.08.2013 թ. թիվ 229652 որոշումը:

Հրազդանի ՏՀՏ-ից տեղեկանալով կիրառված տուգանքի և հաշվարկված տույժերից գոյացած ապառքի չափի մասին կազմակերպությունը 31.07.2013 թ-ին կատարել է ԱԱՀ գծով գոյացած ապառքի վճարումը:

Հարկ է նշել, որ վարչական վարույթ իրականացնելու, հարկային մարմնը սխալ չի համարել եռամսյականին կտրվածքով ԱԱՀ հաշվարկի ներկայացումը, ընդունել է և կիրառել տուգանք՝ այն օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չներկայացնելու համար: Որևէ ծանուցում կամ զգուշացում չի եղել այն մասին, որ ԱԱՀ հաշվարկը պետք է ներկայացնել ամիսների համար, այլ ոչ թե եռամսյակի:

Այսպիսով, հաշվի առնելով հարկային մարմնի կողմից իրականացված վարչական վարույթի էությունը, կազմակերպությունը ևս մեկ անգամ համոզվել է, որ եռամսյակային կտրվածքով ԱԱՀ հաշվարկ ներկայացնելը համարվում է ճիշտ: Բացի այդ, 2013 մայիսի 25-ին կազմակերպությունը էլեկտրոնային եղանակով ստացել է կամերալ ուսումնասիրության Հիշեցում-ծանուցում, ըստ որի կազմակերպության կողմից ներկայացված 2013 թ-ի 1-ին եռամսյակի հաշվարկում կան որոշ անհամապատասխանություններ: Իրականացնելով կամերային ուսումնասիրություն, և ծանուցելով եռամսյակային հաշվարկում տեղ գտած գումարային անհամապատասխանությունների վերաբերյալ, այս անգամ ևս հարկային մարմինը չի գտել, որ եռամսյակային հաշվարկ ներկայացնելը համարվել է սխալ և այդ մասին չի ծանուցել կազմակերպությանը:

Ընդհանուր առմամբ 2013 թ-ի համար կազմակերպության կողմից ներկայացվել են ԱԱՀ 4 եռամսյակների հաշվարկներ, իսկ ԱԱՀ վճարումները կատարվել են յուրաքանչյուր ամիս: Ընդ որում I, II և III եռամսյակների հաշվարկները ներկայացվել են էլեկտրոնային եղանակով, որոնք առանց խոչընդոտների գրանցվել են էլեկտրոնային համակարգում և ընդունվել հարկային մարմնի կողմից՝ համարվելով ստացված: Սակայն 2014 թ-ի հունվարին էլեկտրոնային համակարգն արգելել է գրանցել և էլեկտրոնային եղանակով ՀՀ ՊԵԿ առաքել 2013 թ-ի IV եռամսյակի համար ԱԱՀ հաշվարկը: Դիմելով ՊԵԿ «Թեժ գիծ» կազմակերպությունը տեղակացել է, որ էլեկտրոնային հաշվարկների ընդունման համակարգում վերջերս կատարվել են ծրագրային փոփոխություններ, ինչի արդյունքում համակարգն ԱԱՀ վճարման պարտավորություններ կրող կազմակերպություններից այլևս չի ընդունում ԱԱՀ հաշվարկ եռամսյակային ժամանակահատվածի համար: Ժամկետները չխախտելու համար տվյալ հաշվարկը կից գրությամբ 2014 թ-ի հունվարի 17-ին փոստով առաքվել է Հրազդանի ՏՀՏ:

Այնուհետև Հրազդանի ՏՀՏ կողմից 2014 թ-ի հունվարի 24-ին ստացվել է պատասխան գրություն, համաձայն որի IV եռամսյակի համար ներկայացված հաշվարկը համարվում է չներկայացված: Հաշվի առնելով ստացված գրություն-ծանուցումը և ՊԵԿ էլեկտրոնային համակարգում կատարված փոփոխությունները՝ 2013 թ-ի IV եռամսյակի հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար ս.թ. փետրվարի 3-ին էլեկտրոնային եղանակով ներկայացվել են առանձին ԱԱՀ հաշվարկներ: Սակայն 2014 թ-ի հունվարի 30-ին Հրազդանի ՏՀՏ-ից ստացվել են նոր ծանուցումներ, որ կազմակերպության կողմից նախկինում ներկայացված և ընդունված 2013 թ-ի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների հաշվարկները ևս չեն համապատասխանում օրենսդրությանը և համարվում են «չընդունված»:

Մինչև ծագած խնդրի հետ կապված գործողությունների օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկելը հետագա խնդիրներից խուսափելու համար ս.թ. փետրվարի 7-ին էլեկտրոնային եղանակով ներկայացրել ենք հաշվարկներ 2013 թ-ի հունվար-սեպտեմբեր ամիսների համար:

«Չընդունված» համարելով ամիսներ առաջ «Ընդունված» հաշվարկները և հաշվի առնելով արդեն ներկայացված ամսական հաշվարկների տվյալները հարկային մարմինը կիրառել է տուգանքներ և հաշվարկել տույժեր՝ ԱԱՀ հաշվարկները սահմանված ժամկետներում չներկայացնելու համար: Ըստ այդմ Հրազդանի ՏՀՏ-ն 19.02.2014 թ-ին կայացրել է թիվ 12 որոշումը, ըստ որի կազմակերպության չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 3090550 դրամ ԱԱՀ, որն առաջացել է 2013 թ-ի

հունվար-դեկտեմբերի ԱԱՀ հաշվարկներից՝ դրանց վրա հաշվարկելով տույժեր և տուգանքներ: Բացի այդ, Հրազդանի ՏՀՏ-ն որոշում է կայացրել արգելանք դնել կազմակերպության բանկային հաշվեհամարների վրա՝ 3.090.550 դրամ գումարի չափով:

Հարկ է նշել, որ կազմակերպությունն ամբողջ 2013 թ-ի ընթացքում չի ծանուցվել ԱԱՀ հաշվարկները օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում (ամսական կտրվածքով) ներկայացնելու վերաբերյալ, չնայած այն համգամանքին, որ կազմակերպության կողմից 2013 թ-ի բոլոր ամիսների ընթացքում կատարվել են ԱԱՀ վճարումներ, իսկ հաշվարկները ներկայացվել են եռամսյակային կտրվածքով: Բացի այդ, կազմակերպությունը ԱԱՀ հաշվարկները սխալ ներկայացնելու համար ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի դրույթներով չի ենթարկվել վարչական պատասխանատվության: Դրանով իսկ կազմակերպությունը ժամանակին կծանուցվեր ԱԱՀ հաշվարկներն օրենսդրությամբ սահմանված կարգով չներկայացնելու մասին և, բնականաբար, կներկայացներ ամսական հաշվարկներ, խուսափելով առաջացած խնդիրներից:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները կազմակերպությունը խնդրում է.

1. Կազմակերպության կողմից ներկայացված 2013 թ-ի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների հաշվարկները վերըստին համարել ներկայացված և ընդունված: Կազմակերպությանը չենթարկել վարչական պատասխանատվության նշված եռամսյակների (հունվար-սեպտեմբեր) ամիսների հաշվարկները ուշ ներկայացնելու համար:

2. Անվավեր ճանաչել Հրազդանի ՏՀՏ-ի 19.02.2014 թ-ի թիվ 12 և 07.03.2014 թ-ի թիվ 026728 որոշումները:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Սույն օրենքի իմաստով ԱԱՀ-ի վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր եռամսյակը՝ բացառությամբ սույն հոդվածի երրորդ մասով սահմանված դեպքի»:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Այն անձանց համար, որոնց՝ սույն օրենքի 6 հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված գործարքներից հասույթը (առանց ԱԱՀ-ի) նախորդող օրացուցային տարում գերազանցել է 100 միլիոն դրամը, ԱԱՀ-ի վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր ամիսը»:

Իր հերթին, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է, որ. «ԱԱՀ վճարող չհամարվող անձանց՝ Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացրած գործարքի մասով սույն օրենքի համաձայն ԱԱՀ վճարելու պարտավորություն կրելու դեպքում ԱԱՀ-ի գումարները վճարվում են մինչև գործարքի իրականացմանը հաջորդող ամսվա 20-ը ներառյալ»:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի հիշատակված մասերի դրույթները գտնում է, որ ըստ էության Օրենքի 32-րդ հոդվածի դրույթներից միանշանակ եզրակացության չի կարելի հանգել ԱԱՀ-ի վճարման հաշվետու ժամանակաշրջանը որոշելու վերաբերյալ: Նշված հանգամանքը հիմք է հանդիսացել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի դրույթները Կազմակերպության կողմից յուրովի ընկալման, այսինքն՝ տարընթերցման համար:

Քննարկման ընթացքում Կազմակերպության ներկայացուցիչը նշեց, որ իրենք ի սկզբանե վստահ են եղել, որ ԱԱՀ-ի վճարման հաշվետու ժամանակաշրջանը համարվում է յուրաքանչյուր եռամսյակը:

Կազմակերպությունն իր մոտեցումը հիմնավոր է համարել նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2013 թ-ի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների համար էլեկտրոնային եղանակով ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկները ՀՀ ԿԱ ՊԵԿ էլեկտրոնային համակարգը սահմանված կարգով ընդունել է և միայն 4-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկը ներկայացնելուց հետո է ՀՀ ԿԱ ՊԵԿ էլեկտրոնային համակարգը մերժել դրա ընդունումը՝ ԱԱՀ-ի վճարման հաշվետու ժամանակաշրջանը յուրաքանչյուր ամիսը համարվելու հիմքով: Այսինքն, պետական եկամուտների կոմիտեի կողմից ընդունվել է այն հանգամանքը, որ 2013 թ-ի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների ընթացքում Կազմակերպության համար ԱԱՀ-ի վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր եռամսյակը:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով»:


Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասի և 86-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ Կազմակերպության գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

«Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ 07.04.2014 թ-ի գանգատը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ